

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՎԱՅՔՐՈՒՄ



Մրցակցային Առավելությունների Մասնակցային Գնահատում (PACA)

Վայք, սեպտեմբեր- հոկտեմբեր, 2010



Bundesministerium für
wirtschaftliche Zusammenarbeit
und Entwicklung

Վայքի
քաղաքա-
պետարան



Վայցոց ձորի տուրիզմի
գարբաջսման կենտրոն

Համագործակից կազմակերպությունները

Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերություն ԳՏՀԸ

Գերմանական տեխնիկական համագործակցության ընկերության (ԳՏՀԸ) Համայնքային և տնտեսական զարգացում ծրագիրը Հայաստանում կոչված է նպաստել երկրի համայնքային տնտեսական և զբաղվածության ոլորտների զարգացմանը՝ Ներկայացնելով Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության շահերը ԳՏՀԸ ծրագիրը կապող օղակ է հանդիսանում ՀՀ ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում կառավարման համակարգերի միջև նպաստելով առկա ներուժի հզորացմանն ու առավել արդյունավետ օգտագործմանը

ԳՏՀԸ “Համայնքային և տնտեսական զարգացում” ծրագիրն ունի երեք բաղադրիչ, որոնք ուղղված են համապատասխանաբար համայնքային զարգացմանը զբաղվածության խթանմանը և տնտեսական զարգացմանը:

Թվականի հունվարից ԳՏՀԸ) , - . ծրագիրն ինտեգրվել է ԳՏՀԸ Համայնքային և տնտեսական զարգացում ծրագրին՝ որպես երրորդ բաղադրիչ: Երրորդ բաղադրիչը (Տեղական/տարածաշրջանային տնտեսական զարգացում՝ ՓՄՁ շեշտադրմամբ) կոչված է օժանդակելու գործարար ծառայություններ մատուցող կազմակերպություններին՝ տեղական և տարածաշրջանային ՓՄՁներին ավելի լայնածավալ և որակյալ ծառայություններ մատուցելու նպատակով:

Տեղական տնտեսական զարգացման) 343 (Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում) ծրագիրը հանդիսանում է վերը նշված երրորդ բաղադրիչի գործունեության հիմնական ուղղություններից մեկը:

Գեղարքունիքի ԱԱՊ

Գեղարքունիքի Առևտրաարդյունաբերական պալատը տեղական տնտեսական զարգացման գծով Հայաստանի առաջատար կազմակերպություններից է: Ստեղծելով և ադապտացնելով տեղական տնտեսական զարգացման մոդելներ՝ ԳԱԱՊ-ը նպաստում է մարզերի տնտեսական զարգացմանը, գործարար համայնքների կայացմանն ու հզորացմանը:

Պալատի հիմնական ծառայություններն են՝ համայնքային զարգացման ռազմավարությունների մշակում, իրականացմանն աջակցում, գործարար և ռազմավարական պլանավորում, գործարար խորհրդատվություն, շահերի պաշտպանություն: 5 թվականից Գեղարքունիքի ԱԱՊ-ն Հայաստանում տեղական տնտեսական զարգացման կոնսորցիումի մաս է կազմում՝ Մերձավոր Արևելյան Հիմնադրամի, Հայաստան Համահայկական Հիմնադրամի ԱՄՆ գրասենյակի, Բիզնես Պարետա խորհրդատվական ընկերության և Գերմանական տեխնիկական համագործակցության

ընկերության հետ համատեղ:

Բովանդակություն

Վայքի տնտեսական զարգացման հնարավորությունների ախտորոշում.....	4
Ա. Վայքի տնտեսության զարգացման համայնքային գործոնները.....	4
Ենթակառույցներ և ֆիզիկական միջավայր.....	4
Գործարարության զարգացման այլ գործոններ.....	6
Բ. Վայքի տնտեսական առանցքը.....	6
1. Գործող ձեռնարկությունները.....	6
Սկսնակ ձեռնարկություններ, նոր ներդրումներ.....	8
Համագործակցային միջավայրը ձեռնարկությունների միջև.....	9
Գործարարության աջակցություն.....	10
9 Վայքի տնտեսության վրա ազդող մեծ ներդրումներ.....	10
Վայքի մրցակցային առավելությունները.....	12
Բնական *.....	12
Մասնագիտական, մարդկային.....	12
Տեխնոլոգիական.....	13
Տեղական տնտեսական զարգացման նախաձեռնությունները 2Ինչի՞ց սկսել.....	13
Նախաձեռնություն Ա.....	13
Մեկ կանգառ, բազմաթիվ ծառայություններ.....	13
Նախաձեռնություն Բ.....	16
Արժեքի ավելացում բնության բարիքների վրա.....	16
Նախաձեռնություն Գ.....	18
Ազդեցիկ տնտեսական նախագծերի հաշվառում, իրագրելում, համայնքի շահերի ներկայացում.....	18
Տեղական տնտեսական զարգացման գործընթացի համակարգումը.....	19
Համակարգման անհրաժեշտությունը.....	19
Նախաձեռնություն Գ. Համակարգող խորհուրդ.....	20
Ծրագրի մասին.....	21

Վայքի տնտեսական զարգացման հնարավորությունների ախտորոշում
**Ա. Վայքի տնտեսության զարգացման համայնքային
գործոնները**

Ենթակառույցներ և ֆիզիկական միջավայր

Դիրքը՝ Վայք քաղաքը գտնվում է Վայոց Ձորի մարզում՝ Արփա գետի միջին հոսանքի աջ կողմում: Երևանից 135 կմ հեռավորության վրա՝ հարավ-արևելք, Երևան-Միսիան մայրուղու վրա: Քաղաքի տարածքը հիմնականում շրջապատված է բլրաշարքերով:


Պատկեր- Վայքի համայնապատկերը

Ճանապարհներ՝ Վայոց Ձորի մարզը ընդհանուր առմամբ ապահովված է տրանսպորտային ցանցով: Տարածքով անցնում է Երևան-Վայք-Գորիս մայրուղին, որը ներկայիս նախագծով նախատեսվում է փոխարինել Արփա գետի ձախ ավիով անցնող շրջանցիկ մայրուղով, որը կնպաստի էկոլոգիական, տրանսպորտային և նմանօրինակ քաղաքաշինական հիմնախնդիրների բարելավմանը: Վայքում ներհամայնքային ճանապարհների վիճակը հիմնականում բարվոք է, նպաստավոր գործարարության զարգացման համար:

Ա. Վայքի տնտեսության զարգացման համայնքային գործոնները

Ենթակառույցներ և ֆիզիկական միջավայր

Դիրքը Վայք քաղաքը գտնվում է Վայոց Ձորի մարզում՝ Արփա գետի միջին հոսանքի աջ կողմում: Երևանից 135 կմ հեռավորության վրա՝ հարավ-արևելք, Երևան-Սիսիան մայրուղու վրա: Քաղաքի տարածքը հիմնականում շրջապատված է բլրաշարքերով:



Պատկեր- Վայքի համայնապատկերը

Ճանապարհներ Վայոց Ձորի մարզը ընդհանուր առմամբ ապահովված է տրանսպորտային ցանցով: Տարածքով անցնում է Երևան-Վայք-Գորիս մայրուղին, որը ներկայիս նախագծով նախատեսվում է փոխարինել Արփա գետի ձախ ավիով անցնող շրջանցիկ մայրուղով, որը կնպաստի էկոլոգիական, տրանսպորտային և նմանօրինակ քաղաքաշինական հիմնախնդիրների բարելավմանը: Վայքում ներհամայնքային ճանապարհների վիճակը հիմնականում բարվոք է, նպաստավոր գործարարության զարգացման համար:

Կոմունիկացիաներ Քաղաքն անխափան մատակարարվում է էներգիայով և

գագով, ապահովված է շուրջօրյա խմելու ջրով: Հասանելի է արագ ինտերնետային կապ:

Անշարժ գույք² Քաղաքում կան բազմաթիվ չօգտագործվող շինություններ, որոնք նախկին խորհրդային գործարանների վարչական և արտադրական շինություններ են, ներկայում՝ մասնավոր սեփականություն: Անշարժ գույքը աչքի չի ընկնում ճարտարապետական յուրօրինակությամբ: Հիմնական ավտոմայրուղու երկայնքով ձգվում են խորհրդային շրջանում կառուցված անհրապույր հինգհարկանի շինությունները: Վայք քաղաքի հիմնական փողոցը՝ գուգահեռ ավտոմայրուղուն, բարետես է, կանաչապատ: Երկհարկանի առանձնատները գյուղաքաղաքի ավանդական ու հաճելի միջավայր են ստեղծում:



Պատկեր- Չօգտագործվող արտադրական հզորություններ (ձախից), հինգհարկանի բնակելի շենք Որակավորված աշխատուժ² Վայքի առանցքային առավելությունը գործարարներուժն է, մարդկանց հակումը դեպի գործարարությունը:

Քաղաքում կան որակյալ երկրաբաններ, բնական հյութերի և լիմոնադի արտադրության մասնագետներ, հացթուխներ, տուրիզմի կազմակերպման մասնագետներ, խորհրդային շրջանում որակավորված տեխնոլոգներ ու ինժեներներ: Մնացած ոլորտներում մասնագիտական աշխատուժը աչքի չի ընկնում յուրօրինակ ուժեղ կողմերով՝ սկսած տեխնիկական մասնագիտություններից մինչև սպասարկման ոլորտի մասնագետները: Քաղաքում գործում են բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղեր, որոնք, սակայն, տնտեսությանը չեն ապահովում համապատասխան մասնագետներով:

www.gcci.am

Բ. Վայքի տնտեսական առանցքը

1. Գործող ձեռնարկությունները

Վայքի տնտեսությունը բազմազան է: Մի կողմում մրցունակ, արտադրողական, արդյունավետ կազմակերպված մի քանի բիզնեսներ են, մյուս կողմում՝ ցածր տնտեսական մրցունակությամբ բազմաթիվ ձեռնարկություններ:

Մրցունակ ձեռնարկությունները կենտրոնացած են գինեգործության, հիդրոշինարարության ճյուղերում, ռեստորանային և հյուրանոցային համալիրներ են, գազի լցակայաններ:

Ձեռնարկությունների մրցունակությունը ցածր է առևտրի, սննդարդյունաբերության, բնակչության կենցաղային սպասարկման ոլորտներում:

Համայնքի տնտեսության վերլուծությունը կատարվել է երկու չափանիշների հիման վրա: Մի կողմից ուշադրություն է դարձվում տնտեսության ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած հարևան համայնքներում նույն ճյուղերի շահութաբերությունների հետ: Մյուս կողմից ուշադրություն է դարձվում Վայքի տնտեսության ճյուղերի միջև առկա համագործակցության վրա, այսինքն՝ որքանով է քննարկվող ճյուղը հակված համագործակցելու համայնքի տնտեսության այլ ճյուղերի հետ:

<p>Ճյուղի շահութաբերությունը այլ համայնքների համանման ճյուղերի հետ համեմատած բարձր է</p>	<p>Ճյուղի համեմատական շահութաբերությունը ցածր է</p>	
<p>Ռազմավարական ճյուղեր</p> <ul style="list-style-type: none"> • Ռեստորանային և հյուրանոցային բիզնեսներ • Այգեգործություն՝ ծիրան, խաղող • Թեյերի և խոտաբույսերի արտադրություն 	<p>Բարելավման ձգտող ճյուղեր</p> <ul style="list-style-type: none"> • Պտղի վերամշակում (օղու, գինու արտադրություն, պահածոյացում, չրանոցներ) • Սննդարդյունաբերություն • Սպասարկման ոլորտ 	<p>Ճյուղը պատրաստ է համագործակցել համայնքի այլ ճյուղերի հետ</p>
<p>Զբաղված կամ հագեցած ճյուղեր</p> <ul style="list-style-type: none"> • Գազի և բենզինի լցակայաններ • Տաքսի • ծառայություններ • Խանութներ • Հացի արտադրություն • Քարամշակում 	<p>Անհուսալի ճյուղեր</p>	<p>Ճյուղը համագործակցության տեսանկյունից փակ է</p>

Վայքի տնտեսության հեռանկարը համագործակցության հակված ճյուղերն են, որտեղ կուտակված է տնտեսական զարգացման պոտենցիալը: Հատկանշական է նաև այն, որ այս ճյուղերը կարող են կիրառել տեղական մրցակցային առավելությունները:



Պատկեր- Մրցունակ բիզնեսներ Վայքում. Գինու արտադրամաս, Տուրիզմի կենտրոն և “Լուսա” սրճարան

2. Սկսնակ ձեռնարկություններ, նոր ներդրումներ

Վերջին երկու տարվա ընթացքում Վայքում կատարվող ներդրումների մեծ մասն ուղղվում է այգեգործության և պտուղների վերամշակման ոլորտներին: Այստեղ կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, տնկիների ավելի արտադրողական տեսակներ: Վայք համայնքը գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ չունի, և համայնքի բնակիչները այգեգործության մեջ ներդրումներն ուղղում են հարևան գյուղական համայնքներ:

Պտուղների վերամշակման առումով նույնպես հիմնվում են մրցունակ և արդյունավետ բիզնեսներ: Մարզում տեխնոլոգիական զինվածությամբ առաջատար գինեգործարանը, ծիրանի օղու արտադրամասը, չրերի արտադրամասը, սառնարանային տնտեսությունները գործում են Վայքում:

Նոր ներդրումներ են ուղղվում նաև հիդրոէլեկտրակայանների շինարարության ոլորտ:

Այսինքն, նոր ներդրումներով հիմնականում միջին չափի բիզնեսներ են ստեղծվում՝ ավելի մրցունակ, արտադրողական և արտահանման պոտենցիալով:

**Ներդիր- Արտադրողականության հաշվարկ
ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ճյուղի համար**

1	Պտղի անվանումը	Դեղձ	Ծիրան 5-6 տարեկան	Սալոր 5 տ.	Ընկույզ 15 տ.	Խնձոր 5տ
2	1հա-ից ստացվող միջին բերքը, կգ	25,000	23 000	50,000	7,800	32,000
3	1կգ-ի միջին մեծածախ գինը (2010թ.)	500	525	500	1,000	300
4	1հա-ից ստացվող եկամուտը ('2'x'3')	12,500 ,000	12,075,000	25,000, 000	7,800,0 00	9,600,000
5	1հա-ի վրա աշխատած մարդ/օրերի քանակը	244	244	244	184	244
6	1հա-ի վրա աշխատած մարդ/տարիների քանակը (' '300)	0.81	0.81	0.81	0.61	0.81
7	1 մարդու տարեկան արտադրողականություն ընդամուս (4:'6')	15,368 ,852	14,846,311	30,737, 705	12,717, 391	11,803,279

Սալորը, ծիրանը և դեղձը այգեգործության համեմատական մեծ արտադրողականությամբ ճյուղերն են: Ընդ որում, եթե դեղձի առումով արտադրողականությունը զիջում է Նոյեմբերյանի համապատասխան ցուցանիշին, ապա սալորի և ծիրանի առումով Վայքի տարածաշրջանը Հայաստանի առաջատարներից է: Բարձր է նաև ընկույզի արտադրողականությունը՝ համեմատած Հայաստանի այլ տարածաշրջանների հետ:

Խաղողի առումով Վայոց ձորի առավելությունը կայանում է ոչ այնքան արտադրողականության, որքան կոնկրետ յուրօրինակ տեսակներ աճեցնելու մեջ (օրինակ՝ արենի):

3. Համագործակցային միջավայրը ձեռնարկությունների միջև

Ձեռնարկությունների միջև կապերը Վայքում դեռևս զարգացած չեն:

Գլխավոր ավտոմայրուղու երկայնքով տեղակայված խանութներում դժվար է գտնել տեղական արտադրության միրգ, գինիներ, թեյեր, մեղր:

Որոշ դեպքերում, երբ առկա է գյուղմթերքների շարունակական վերամշակում, գործարարը նախընտրում է ունենալ և՛ այգիներ, և՛ վերամշակող ձեռնարկություն: Գործունեության նմանօրինակ լայն ցրվածությունը չի ուղեկցվում մասնագիտացմամբ, ինչը նվազեցնում է գործարար գործընթացների արդյունավետությունը:

Կան նաև համագործակցության դրական օրինակներ: Տեղի ռեստորանները սպառում են հիմնականում տեղական արտադրության գյուղմթերք՝ պանիր, միս, տնական արտադրության օղիներ և կաթնամթերք:

4. Գործարարության աջակցություն

Վայքում գործում են գործարարության աջակցման երկու կազմակերպություն: Փոքր ու Միջին Ձեռներեցության Զարգացման Ազգային Կենտրոնի (ՓՄՁ ԶԱԿ) Վայոց ձորի մասնաճյուղը մատուցում է ծառայություններ դասընթացների, խորհրդատվության, վարկային երաշխիքների, մարկետինգային և գովազդային աջակցության և այլ տեսքով: Կենտրոնը համաֆինանսավորում է ձեռնարկություններին նշյալ ծառայությունների արժեքի **60-80%**- ի չափով: Վայքի գործարարները գոհունակություն են հայտնում հատկապես գովազդային վահանակների և պիտակների համաֆինանսավորման ենթաձևերից: Վերջին տարվա ընթացքում կրճատվել է կենտրոնի ֆինանսավորումը պետական բյուջեից, ինչը ազդել է նաև մատուցվող ծառայությունների քանակի վրա:

Վայքում է տեղակայված նաև Վայոց ձորի Տուրիզմի Կենտրոնը: Կենտրոնը հիմնականում մասնագիտացած է մարզի տուրիստական գրավչության ներկայացմամբ, ինչպես նաև տարբեր տուրիստական գործակալությունների հետ ուղղակի կապերի ստեղծմամբ: Կենտրոնի գործունեությունը նպաստում է հատկապես տեղի ռեստորանների և հյուրանոցների գործունեությանը:

Այսուհանդերձ, Վայքում գործարարության աջակցման ոլորտը բազմաթիվ բաց կողմեր ունի: Բացակայում են գործարարության համակողմանի աջակցության գործիքները՝ սկսած իրավական խորհրդատվությունից, շուկաներում ապրանքների առաջնորման ծառայություններից, մինչև վերապատրաստումներն ու պրակտիկ խորհրդատվությունը: Ընդհանուր առմամբ, տարածաշրջանում որակյալ գործարար ծառայությունների պահանջարկ կա, որը ներկայումս չի բավարարվում:

5. Վայքի տնտեսության վրա ազդող մեծ ներդրումներ

Ա. Պասկնիչի կամրջի հարևանությամբ տուրիստական համալիրի կառուցում

Ծրագիրն ուղղված է լինելու Վայքում զբոսաշրջության զարգացմանը, տեղի

բնակչության զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև նպաստելու է գյուղատնտեսական տեղական արտադրանքի իրացմանը: Համալիրի տարածքի ընտրության հարցում հաշվի են առնվել քաղաքին մոտ լինելու, գյուղացիական տնտեսությունների ապրանքների վաճառքի համար բարենպաստ պայմանների առկայության, տեղի բնակչությանը սպասարկման աշխատանքներում հնարավորինս ներգրավելու հանգամանքները: Նախատեսված է համալիրը կառուցել Էկոլոգիապես մաքուր նյութերով, իսկ շահագործումն ապահովել արևային էներգիայով: Առաջիկայում ծրագիրը կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը, որից հետո մրցութային կարգով կընտրվի ծրագիրն իրականացնող կազմակերպությունը:



Պատկեր- Պասկեիչի կամուրջը վայրում

Բ. Հյուսիս- Հարավ ավտոմայրուղու շինարարություն

Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու Վայքի հատվածը դեռևս նախագծվում է, և որոշված չէ՝ արդյոք ճանապարհը կանցնի ներկա մայրուղու տեղով՝ Վայք քաղաքի միջով, թե այն կշրջանցի Վայքը:

Ամեն դեպքում, մայրուղու շինարարությունը էական ազդեցություն կունենա Վայքի տնտեսության ներկա կառուցվածքի վրա, քանի որ ներկայում տնտեսության մրցունակ ճյուղերը կենտրոնացած են մայրուղու երկու

կողմերում և օգտագործում են այդ մրցակցային առավելությունը:

Գ. Ոսկու կորզման ֆաբրիկա

Արինում ոսկու կորզման ֆաբրիկայի շինարարությունը նույնպես իրատեսական նախագիծ է: Այն, իրականացման դեպքում, կստեղծի ավելի քան չորս հարյուր աշխատատեղ Վայքի և շրջակա գյուղերի ազգաբնակչության համար՝ միաժամանակ առաջացնելով էկոլոգիական հիմնահարցեր:

Վայքի մրցակցային առավելությունները

Վայքի տնտեսությունն ունի մի շարք մրցակցային առավելություններ, որոնց մի մասը ներկայումս ունի տնտեսական կիրառություն, օգտագործվում է ձեռնարկությունների կողմից:

Համայնքի մրցակցային առավելություններն են՝

Բնական *

- ուղղաձիգ գոտիականության բազմազանություն,
- ջրային ռեսուրսներ՝ գետ,
- ոսկու, բազալտի և արձձի հանքավայրեր համայնքի մոտակայքում,
- Ջերմուկը՝ որպես առողջարարական կենտրոն, Վայքի հարևանությամբ է,
- էկոլոգիապես մաքուր բնություն,
- մեղմ և տաք կլիմա,
- արևային օրերի քանակ,
- ճանապարհատրանսպորտային խաչմերուկ,
- բնության հուշարձաններ հարստացված մարդկային ստեղծագործություններով՝ Պասկևիչի կամուրջ, Սուրբ Տրդատ Եկեղեցի և այլն:

* Բնական մրցակցային առավելությունների մեջ են մտնում այն առավելությունները, որոնք տրված են բնության կողմից կամ էլ ստեղծվել են դարեր առաջ և համայնքի բնակչության կողմից էապես փոփոխությունների չեն ենթարկվել:

Մասնագիտական, մարդկային

- տուրիզմի զարգացման մասնագետներ,

- տեխնոլոգներ, ինժեներներ, երկրաբաններ,
- գործարար ունակություններով մարդկանց մեծ տեսակարար կշիռ:

Տեխնոլոգիական

- տնական գինու, օդու, դոշաբի ավանդական տեխնոլոգիաներ,
- քարամշակման տեխնոլոգիաներ,
- սառնարաններ,
- գինեգործության ժամանակակից տեխնոլոգիաներ,
- այգեգործության ժամանակակից տեխնոլոգիաներ,
- մրգի վերամշակման (չիր, օղի) մրցունակ տեխնոլոգիաներ:

Տեղական տնտեսական զարգացման նախաձեռնությունները- Ինչի՞ց սկսել

Նախաձեռնություն Ա

Մեկ կանգառ, բազմաթիվ ծառայություններ

*Մրցակցային առավելություն՝ ավտոմայրուղի և արդեն ձևավորված բիզնես-
համակարգեր:*

Վայքը Երևան- Մեղրի և Երևան- Ղարաբաղ ճանապարհների կենտրոնական հատվածում է: Արդեն ձևավորվել են գազի և բենզինի լցակայանների համակարգեր, արագ սննդի կետեր, զարգացած ռեստորանային համակարգ, հյուրանոցային տնտեսություններ:

Այս գործարար ոլորտներում առկա մրցակցությունը նպաստում է ծառայությունների որակի բարելավմանը:

Այսպես՝ գազի լցակայանների ծառայությունների ընդհանուր ծավալի կեսից ավելին մատուցվում է Հայաստանի այլ համայնքների և մարզերի բնակչությանը:

Ռեստորանային և արագ սննդի ծառայությունների շրջանառության ընդհանուր ծավալում Վայքի բնակչության մասնաբաժինը չի անցնում **30%-**ը:

Վայքի ավտոմայրուղուն հարակից խանութներում ընդհանուր շրջանառության մոտ **20%-**ը ապահովվում է անցորդների հաշվին:

Ավտոմայրուղուն հարակից բիզնեսներում ընդհանուր առմամբ զբաղված է մոտավորապես **250** մարդ կամ Վայքի աշխատունակ բնակչության մոտ **10%-**ը: Միջին ամսական աշխատավարձը տատանվում է **45 000- 50 000** դրամի սահմաններում:

Հնարավոր նախաձեռնություններ

1. Ավտոկանգառի հարևանությամբ որակյալ սպասարկմամբ խանութների ցանցի ստեղծում

Ավտոմայրուղու անցորդներին հասանելի մթերային խանութները հիմնականում ավտոկանգառի հարևանությամբ են: Այստեղ են սպասարկվում հիմնականում Վայքի այդ թաղամասի և հարակից գյուղերի բնակիչները: Որոշ խանութներ սպասարկում են նաև մայրուղու անցորդներին:

Մայրուղուց նոր հաճախորդների ներգրավման համար ձեռնարկվում են հետևյալ քայլերը.

Գործող բիզնեսներ

- Խանութների արտաքին տեսքի և գովազդի համապատասխանեցում միջինից բաձր որակի և գնի ապրանքներ սպառող հաճախորդի պահանջարկին:
- Ապրանքատեսականու աճ: Միջինից բարձր գնի և որակի ապրանքատեսականու ավելացում:
- Խանութների ներքին դասավորության բարելավում, տարածքների օպտիմալ կառավարում:
- Սպասարկման որակի բարելավում, անձնակազմի վերապատրաստում:
- Տեղական արտադրության սննդամթերքի և մրգերի մասնագիտացված բաժինների առանձնացում:

Նոր հիմնվող բիզնեսներ

Միաժամանակ մի քանի խանութների վերափոխումը և նորերի հիմնադրումը կստեղծի ավտոմայրուղու անցորդների սպասարկման համար բարենպաստ պայմաններ՝ հիմնված հատկապես որակյալ տեղական արտադրանքի և պտուղների մրցակցային առավելությունների վրա:

Այստեղ կարող են գործել նաև որակյալ արագ սննդի բիզնեսներ:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

Ավտոկանգառի հատվածում անհրաժեշտ է նաև հողօգտագործման և ճարտարապետական նորմերի սահմանում, ինչպես նաև կոմունալ հարմարությունների կառուցում:





Պատկեր- Վայքի խանութները

2. Վայքի հյուսիսային մուտքի մոտ գազի և բենզինի լցակայանների, ավտոտեխասպասարկման, ինչպես նաև արագ սննդի կետերի կենտրոնացում
Բնական զարգացման արդյունքում ներկայում գազի և բենզինի լցակայանները կենտրոնացած են հիմնականում Վայքի հյուսիսային մուտքի մոտ, որտեղ նաև եկեղեցին է: Այս հատվածը ավելի մրցունակ և արդյունավետ դարձնելը ենթադրում է՝

Գործող բիզնեսներ

- Արագ սննդի կետերի գործունեության բարելավում, կողմնորոշում ոչ միայն դեպի սեփական լցակայանից օգտվող հաճախորդը, այլ նաև մայրուղու ընդհանուր տրանսպորտային հոսքը:

- Ավտոտեխասպասարկման կետերի տեխնիկական հագեցվածության աճ:

Նոր հիմնվող բիզնեսներ

- Ավտոտեխասպասարկման ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած կետեր՝ որակյալ մասնագետներով:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

- Քաղաքապետարանի կողմից մասնակցային գործընթացի նախաձեռնում՝ տարածքի հողային և ճարտարապետական պլանավորման համար (օրինակ՝ միասնական արտաքին գովազդ, բիզնեսների արտաքին տեսքի մշակում և այլն):

Կրթական հաստատություններ, բիզնեսին աջակից կառուցներ

- Արտասահմանյան մեքենաների վերանորոգման մասնագետների վերապատրաստում՝ էլեկտրոնային ախտորոշում, ինժեկտորների վերանորոգում և այլն:

Ավտոտեխասպասարկման առումով Եղեգնաձորում ձևավորվող կլաստերը ուժեղ մրցակից է, և արագ ու արդյունավետ գործողությունների բացակայությունը կարող է ընդհանրապես թուլացնել Վայքի դիրքերը այս ոլորտում և ոչնչացնել ավտոտեխասպասարկման ճյուղը:



Պատկեր- գազի լցակայաններ

3. Ռեստորանային և հյուրանոցային համակարգ

Վայքում տուրիզմի զարգացման հեռանկարը և բազմաթիվ տուրիստական օբյեկտների նկատմամբ կենտրոնական դիրքում գտնվելը նպաստում են հիմնական ավտոմայրուղու առավելություններով պայմանավորված՝ ռեստորանների և հյուրանոցների զարգացմանը:

Այս ոլորտի արդյունավետության բարձրացմանը կնպաստեն՝

Գործող բիզնեսներ

- Գովազդման միասնական ռազմավարության մշակումը:
- Ազգային խոհանոցին հատուկ ճաշատեսակների վերածնունդը և կիրառումը ռեստորաններում (օրինակ՝ «Դոլմամա» ռեստորանը Երևանում):
- Արտաքին և ներքին ձևավորման ազգային ոճի կիրառումը (օրինակ՝ «Միրհավ» հյուրանոցը Գորիսում):

Նոր հիմնվող բիզնեսներ

- Մենդաթերքի արտադրություն- ներկայում արդեն բավական որակյալ հացի, լիմոնադի և հյութերի արտադրամասերը պետք է համալրվեն հրուշակեղենի, պանրի և այլ կաթնամթերքի, ինչպես նաև տեղական մրգի վերամշակման ձեռնարկություններով:

Կրթական և բիզնեսին աջակից կառույցներ

- Մպասարկման ոլորտում մասնագետների շարունակական վերապատրաստման դասընթացների անցկացումը՝ խոհարարների, մատուցողների, հյուրանոցային սպասարկողների և այլն:
- Աջակցություն միասնական գովազդային ռազմավարության մշակման և ազգային ճաշատեսակների ու դիզայնի ներդրման հարցում:

Պատկեր- Վայքի ռեստորանները

Նշված երեք խմբերում դասավորված միջոցառումների իրականացումը մեկ տարվա ընթացքում կհանգեցնի այս ոլորտներում գործող բիզնեսներում աշխատակիցների թվի գրեթե կիսով չափ ավելացմանը, ինչպես նաև մասնագետների և այլ աշխատակիցների աշխատավարձերի աճին:

Նախաձեռնություն Բ

Արժեքի ավելացում բնության բարիքների վրա

Մրցակցային առավելություններ

Մեղմ բնակլիմայական պայմանները նպաստում են Վայքի տարածաշրջանում պտուղների և խոտաբույսերի աճմանը: Անցյալ մի քանի տարիների ընթացքում նոր այգիներ են հիմնվել՝ ծիրան, սալոր, խնձոր, ընկույզ, նուշ: Շրջակա սարերում աճում են ուրց, դաղձ և այլ բուժիչ խոտաբույսեր, որոնք օգտագործում են թեյի արտադրության և բուսաբուժության մեջ:

Վայքում արդեն գործում են ձեռնարկություններ, որոնք հաջողված օրինակներ են պտուղների և խոտաբույսերի վերամշակման ոլորտում գինու արտադրություն, թեյերի արտադրություն: Այս ձեռնարկությունների մրցունակությունը և բարձր արտադրողականությունը, ինչպես նաև շուկաներում այս արտադրատեսակների նկատմամբ աճող պահանջարկը հնարավորություն են ստեղծում ճյուղի զարգացման համար:

Դրան նպաստում է նաև Վայքի կենտրոնական դիրքը սպառման շուկաների նկատմամբ:

Հնարավոր նախաձեռնություններ

Գործող ձեռնարկություններ

- Տեղական պտուղների, դոշաբի, գինու, չրերի վաճառք տեղի խանութներում՝ առանձնացված բաժիններում:
- Դոշաբի արտադրություն՝ որպես կազմակերպված բիզնես:

Նոր հիմնվող ձեռնարկություններ

- Պտուղների պահածոյացման փոքր արտադրամասեր՝ հիմնված տնական արտադրության տեխնոլոգիաների վրա՝ ուղղված դեպի կոնկրետ փոքրածավալ իրացման շուկաներ:

Նախաձեռնություն F

Արժեքի ավելացում բնության բարիքների վրա

Մրցակցային առավելություններ

Մեղմ բնակլիմայական պայմանները նպաստում են Վայքի տարածաշրջանում պտուղների և խոտաբույսերի աճմանը: Անցյալ մի քանի տարիների ընթացքում նոր այգիներ են հիմնվել՝ ծիրան, սալոր, խնձոր, ընկույզ, նուշ: Շրջակա սարերում աճում են ուրց, դաղձ և այլ բուժիչ խոտաբույսեր, որոնք օգտագործում են թեյի արտադրության և բուսաբուժության մեջ:

Վայքում արդեն գործում են ձեռնարկություններ, որոնք հաջողված օրինակներ են պտուղների և խոտաբույսերի վերամշակման ոլորտում՝ գինու արտադրություն, թեյերի արտադրություն: Այս ձեռնարկությունների մրցունակությունը և բարձր արտադրողականությունը, ինչպես նաև շուկաներում այս արտադրատեսակների նկատմամբ աճող պահանջարկը հնարավորություն են ստեղծում ճյուղի զարգացման համար:

Դրան նպաստում է նաև Վայքի կենտրոնական դիրքը սպառման շուկաների նկատմամբ:

Հնարավոր նախաձեռնություններ

Գործող ձեռնարկություններ

- Տեղական պտուղների, դոշաբի, գինու, չրերի վաճառք տեղի խանութներում՝ առանձնացված բաժիններում:
- Դոշաբի արտադրություն՝ որպես կազմակերպված բիզնես:

Նոր հիմնվող ձեռնարկություններ

- Պտուղների պահածոյացման փոքր արտադրամասեր՝ հիմնված տնական արտադրության տեխնոլոգիաների վրա՝ ուղղված դեպի կոնկրետ փոքրածավալ իրացման շուկաներ:
- Փոքր չրանոցներ: Հայկական չրի աճող պահանջարկը չի հանդիպում համապատասխան առաջարկի: Վայքում հնարավոր է ծիրանի, սալորի և այլ պտուղների չրանոցների գործարկում:
- Մառնարաններ՝ տեղական պտուղների պահպանման ժամկետը երկարացնելու և ձմեռային սեզոնի ընթացքում ավելի թանկ վաճառելու համար:
- Մրգային օդու արտադրություն: Արդեն գործարկվել է մեկ ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած արտադրամաս:
- Բնական հյութերի արտադրություն՝ հիմնված տեղի պտուղների այն մասի օգտագործման վրա, որն արդեն պիտանի չէ փաթեթավորման և իրացման համար:
- Ջերմոցներ՝ կանաչի, բանջարեղեն, ծաղիկ: Ձմեռային սեզոնի ընթացքում կանաչիների, պոմիդորի և վարունգի տեղական

պահանջարկը բավարարվում է ներմուծման հաշվին, այնինչ տեղի բնակլիմայական պայմանները բարենպաստ են արդյունավետ ջերմոցների կազմակերպման համար:

- Տեղական պտուղների փաթեթավորում և վաճառք:
- Տեղական բուժիչ խոտաբույսերի փաթեթավորում, իրացում:

Կրթական հաստատություններ, բիզնեսին աջակցող կառույցներ

- Փառատոնների, ցուցահանդեսների կազմակերպում՝ տեղական պտուղների և վերամշակման արտադրանքի իրացման համար:
- Պտղաբուծության և պտուղների պահածոյացման ուսուցում՝ հիմնված կոնկրետ տեխնոլոգիական պրոցեսների “իրագործում- ուսուցում” տարբերակի վրա:

Տեղական ինքնակառավարման մարմիններ

- Փառատոնների, ցուցահանդեսների կազմակերպմանն աջակցություն:
- Հողերի կառավարման գործընթացում արտադրական տարածքների հատկացում պտուղների վերամշակման արժեքային շղթայի ձեռնարկություններին:

Պատկեր- Քերթը հասունացել է

Նախաձեռնություն Գ.

Ազդեցիկ տնտեսական նախագծերի հաշվառում, իրագրելում, համայնքի շահերի ներկայացում

Պասկևիչի կամրջի հարևանությամբ ագրոտուրիզմի զարգացման կենտրոնի հիմնումը, Հյուսիս- Հարավ ավտոմայրուղու շինարարությունը, Ոսկու կորգման ֆաբրիկայի կառուցումը կարող են սկզբունքային ազդեցություն ունենալ Վայքի զարգացման և հեռանկարի վրա:

Սակայն տեղի տնտեսավարող սուբյեկտները, տարբեր մակարդակի որոշում կայացնողները տեղեկացված չեն նշված ծրագրերի մասին: Ավելի շուտ բերանացի փոխանցվող ինֆորմացիա է, որը ստույգ չէ և հնարավոր չէ դա հաշվառել ապագա պլանները կառուցելիս:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Վայքի քաղաքապետարանի անձնակազմին՝ ի դեմս քաղաքապետ պարոն Հարություն Սարգսյանի, ծրագրի իրականացմանը աջակցություն ցուցաբերելու համար:

Վայքի տնտեսական զարգացման ծրագրի տեղական թիմի անդամներն են՝

Անուն	Աշխատանք	Հեռախոս
Վասիլ Ասլանյան	Քաղաքապետի օգնական	94 33 37 65
Արմինե Սաֆարյան	ՄՄԿ տնօրեն, “Հույս իննսունութ” ՀԿ նախագահ	98 11 40 55
Էդգար Լևոնյան	Վայոց Ձորի մարզպետարան	77 33 17 11
Խորեն Նազարյան	Վայքի ավագանու անդամ	93 01 80 06
Ռուզան Ղազարյան	“Աշխատանք և հայրենիք” ՀԿ նախագահ	93 34 85 56
Շիրակ Միքայելյան	Տուրիզմի զարգացման կենտրոնի տնօրեն	93 28 93 26
Նարեկ Բաբաջանյան	Գործարար	94 33 36 95

Ծրագրի փորձագիտական խումբ

Վարազդատ Կարապետյան, ԳԱԱՊ նախագահ
 Լևոն Դավթյան, ԳԱԱՊ փորձագետ
 Մհեր Դավոյան, ԳԱԱՊ փորձագետ
 Գոհար Ղաբուզյան, ԳՏՀՀ փորձագետ